Վարդան Հակոբյան

Որպես հիշողություն մեզնից առաջ ապրածների

Ապրում ենք՝ որպես հիշողությունը մեզնից առաջ ապրածների

Իմ գոտին Սաթի տատս
հյուսում էր միշտ իր ձեռքով,
հիշողության թելերից
գույնզգույն՝ հանց ծաղկոտ
ծամերը ջրվեժների:

Հիշողությունը աչքերիս մեջ
լույս է ավելացնում, դեմքս
լվանում եմ ասես մեր
երկնամերձ Ամըտեղա ջրով,
որ բխում է սուրբ քարից:

Հեռվից նայում եմ հեռվին,
Թումանյանը, ահա, դեմից,
Գիքորի ձեռքը պինդ բռնած՝
գալիս-մտնում է խրճիթը
գետափի, որը Ես եմ, դուռս՝ բաց…

Հիշողությունը արքան է
ապագայի, հայոց որդին,
քայլում է լեռների վրայով,
քայլում է արևի վրայով,
և դարերը ետևից չեն հասնում:

* * *

Հին ճանապարհները մեռնում են

ծնվում են նոր ճանապարհներ
իսկ արահետ ու կածան այլևս
տուն չեն գալիս հանդ ու սարից
չգիտեմ ով և
ումից է խռով
քո մի հատիկ բառը չեղարկում է
խավարը
խոտը դառնում է լեզվակը զանգի՝
ավետելով
տիեզերական համերաշխություն
և շարունակում է առուն հոսել

Հրովարտակ՝ արձակված մայիսին

Նկատի առնելով իմ ապրած ժամանակը եւ աններելի կյանքն իմ,
եւ այն, որ արդեն անուղղելի են սխալներս գործած ու անհամար,
եւ այն, որ կյանքում ոչ ոք չփորձեց հասկանալ հոգիս բազմածվատ,
եւ այն, որ չի գրվում քերթվածքն այն, որի համար արժե ծնվել,
եւ այն, որ փուչ է տիեզերքում ամեն ինչ ու ստաստեղծ-ստաբեր,
եւ այն, որ հրեշներ դուրս եկան երկրպագած իմ բոլոր կուռքերը,
եւ այն, որ արդեն զգացմունքներս չեն խոսում տարիքիս հետ,
(կարծում եմ, անձնագրային ինչ որ վրիպակ է թույլ տրվել ուղղակի),
ուստի հորդորում եմ ՝ վաղը ոչ ոք իմ յոթանասունամյակը չշնորհավորի,
քանի որ հաստատ որոշել եմ այդ օրը եւ, ընդհանրապես՝ երբեք
չծնվել, ոչ մի անգամ, իմ այս որոշումը սակարկման ենթակա չէ,
եւ թող ինձ ներեն ծնողներս, սերերս, չսերերս եւ նրանք, ովքեր
կարող են դրա համար տխրել կամ գուցե եւ ի սրտե ուրախանալ,
եւ նրանք, ովքեր պատրաստվում են ջերմ ուղերձներ հղել,
եւ նրանք, ովքեր մտքում որոշել են ինձ չմտաբերել բացարձակապես,
եւ նրանք, ովքեր առանց իմ մասին պարբերաբար զրպարտագրեր թխելու,
համացանցով կամ գնչուական փոստով տարածելու, պիտի ոչ եւս դառնան,

եւ այն թշնամիներս, որ դժվար թե կայանան իմ բացակայությամբ,
եւ այն սիրո խոստովանությունները, որ իմ շուրթերից չեն հնչելու,
եւ այն երգերը, որ իմ ձեռքերով աշխարհում այլևս չեն գրվելու,
եւ այն աղջիկները, որ առանց ինձ խաբելու անիմաստ թոշնելու են,
եւ այն պոետները՝ Տերյան,Չարենց, Սիամանթո, Ուիթմեն, Բորխես,
որոնց հանճարեղ ստիխները ես չեմ կարդալու ցավի խնկարկումով,
եւ այն արահետները մեր Եխծուն ծյորում, որոնցով չեմ քայլելու,
եւ այն մեղրաճաղիկները, որ չեն փնջվելու իմ կարոտի քնքշանքներով,
եւ այն աղբյուրները, որոնց ակերից ես համբույրներ չեմ քաղելու,
եւ այն աստղերը Մեծ քարին երազված, որոնցից չեմ կախվելու,
եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւ եւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւեւ….
Հոբելյանական հարկադիր խոսքերից ես միշտ սրտախառնուք եմ զգում։
Թող ներվի, որ բոլորին միանգամից ես դառնորեն հիասթափեցրի,
մանավանդ՝ մահն էլ անհարմար վիճակի մեջ կմնա՝ չգիտեմ երբ,
որ թեկուզ մի հասկով կամ տատասկով իր հունձքը պակաս է լինելու։

Հ.Գ.
Իմ այս վճիռը ես կայացրել եմ իմ կամքով, սթափ վիճակում,
և այն անբեկանելի է, խնդրում եմ դրա համար ոչ ոքի չմեղադրել։

20.05.2018թ.
Ստեփանակերտ

* * *

Երբ ծնվում ես,
դա պատահար է
զարմանալի,
երբ չես ծնվում``
առավել եւս։
Երբ սիրում ես,
դա պատահար է

զարմանալի,
երբ չես սիրում՝
առավել եւս։
Երբ ապրում ես,
դա պատահար է
զարմանալի,
երբ չես ապրում՝
առավել եւս։
Անշուշտ,մահը
պատահար է
զարմանալի,
իսկ կյանքը՝
առավել եւս։

Սարինյանի շիրմաքարի մոտ

Ամեն մի բառ այստեղ սխալ է,
ամեն մի ձայն այստեղ սխալ է,
և առավել ևս՝ լռությունը։

Ձեռքս դնում եմ ոչ քարե քարին,
որը քամիների ու հողմերի,
անանձրև անձրևների,
անարեգակ արևների,
անժամանակ ժամանակների
հակոտնյան է,
և տիեզերական
սուբստանցը
դարձյալ ծաղկեծաղիկն է։

Թեև բոլորը դարձել են բոլոր, բայց հողը
վերստին բաժանարարն է անունների…

* * *

Խոսում եմ այնպես, որ ասես
ոչ թե ես եմ բառն ասում,
այլ բառն ինքն է
ինձ արտաբերում: Մեջքի վրա
պառկել եմ գետի մեջ՝
արևն իմ հայացքում, և
գետն ու արևն ինձ տանում են
այնպես, ասես ես եմ
գետն ու արևը տանում ինձ հետ:

Վշտոտ մարդիկ են հնարել,
թե ուռենիները լաց են լինում:

Հուլունքաշարեր քո պարանոցի համար. բառի առագաստները

Մինչև որ լռությունը չի հասունանում՝
բառը չի ծնվում: Եվ
ես տեսնում եմ, թե ինչպես են ոտքերիդ տակ
հարություն առնում
հազար տարվա հանգած ճանապարհները:
Հայացքդ լույսի ընծայագիր է:
Քեզ մոտ բառերի հետ հարաբերություններս
դառնում են
բացարձակապես անկողմնակալ: Գրելն
ինձ համար դառնում է ներսս
բնակեցնել: Եվ միաժամանակ ինձ ոչնչացնում
եմ, երբ սկսում եմ գրել: Մանավանդ՝ նույն
բառը նույն բառը չէ, տարբերությունը նրանում է,
թե ում եմ դիմում: Բառը
ճամփորդություն է, ուր մենք միասին ենք
անգամ այն ժամանակ,

երբ միասին չենք:
Ես փնտրում եմ խոսքի այն բանաձևը, որ կասի
այն, ինչը չի ասվում, քանզի բառը ցավի
անուղղակի դիմադրություն է, թեև ես հաճախ եմ
լռում, որ ձայնս քեզ ավելի հասանելի լինի: Իսկ
ասված բառը երբ արգելակների չի հանդիպում
ժամանակի մեջ,
ուրեմն՝ ինքը չէ: Բառը նման է քո առեղծվածին,
որքան ուզում եմ բացել այն,
նույնքան բազմապատկվում է:
Մինչև քեզ հանդիպելը չգիտեի, որ «սուտ»
բառը սուտ է: Երբ քեզ եմ նայում,
դառնում եմ կույր՝
շրջապատի հանդեպ, իսկ
բառերը ինձ աղավաղում են: Եթե
դու չլինեիր, Աստված մի արասցե,
ոչ մեկն աշխարհում ոչ մեկին երբեք
չէր ասելու
«Ես քեզ սիրում եմ» բառերը:

Բառը բնակարանն է Աստծո և
անկասելի է՝ որպես դարձ: Խոսքը,
ինչպես քո հայացքում, քո լեզվի վրա ու շուրթերին,
պիտի մանուշակներ ունենա,
թեկուզ՝ մեկ-երկու բառանոց… Ես այնքան
մեղավոր եմ զգում ինձ. իմ գրելը միշտ եղել է
բարձրաձայն երազել,
մինչդեռ դու և աշխարհը
այն ընդունել եք որպես իրականություն: Բառը
ինքնապեղում է: Սակայն իմ գտածոները
ոչ բովանդակությամբ,

ոչ տեղագրությամբ,
իրար չեն բռնում, իրար հետ չեն խոսում:

Մեր զույգ ափերը իրար ենք բերում (մի՞թե
նման չեն Նոյան տապանին), որ նոր ջրհեղեղից
փրկենք երկիրը մեր փոքրիկ՝ անմեղսական մի սիրով…

***

Երբ փողոցով անցնում էի
դիմացից եկող մի աղջիկ
ժպտաց
ինձնից մի քիչ առաջ անցնող տղային
ես մտքումս շնորհակալություն ասացի
ով գիտե գուցե այն տղան ես էի
ջահել տարիքում
ես էլ չլինեմ՝ ժպիտը գեղեցիկ էր՝
որպես անցյալում տեսած երազ:

ԾԵՐՈՒԹՅՈՒՆ

Երբ ծիծաղում ես,
կողքի նայողներին թվում է,
թե լաց ես լինում:

Անուղղություն

Ինքներս մեզ հասնելու համար
ճանապարհ ենք կտրում մինչև ԱՄՆ:
Ինքներս մեզ հասնելու համար
ճանապարհ ենք կտրում մինչև Ալթայ:
Իքներս մեզ հասնելու համար
ուր ասես, որ չենք գնում՝ Ուրուգվայ,

Եգիպտոս, Չինումաչին, Մադագասկար:
Եվ այդպես էլ, ավաղ, չենք հասկանում՝
բոլոր տեղերից դեպի մեզ պիտի գանք
ինքներս մեզ հասնելու համար…

* * *

Երբ իմ կյանքից հանում եմ
ապրածս վատ օրերը,
համարյա այնպես է ստացվում,
թե դեռ չեմ ծնվել:
Այդ դեպքում ես որտե՞ղ,
երբ եմ քեզ հանդիպել:

ՎՇՏԵՐԳ

Երբ գրիչը ձեռքս եմ առնում, իմ մատները սկսում են հստակ տեսնել՝
որքան տխեղծ ու մգլած է այս աշխարհը՝ մի չգրված թղթի հանդեպ…
Եվ իմաստ ունի՞, արդյոք, գրել, կամ՝ ու՞մ համար, ինչո՞ւ, մանավանդ,
երբ բառերը ոչ թե լսվում են ունկերով, այլ անտեսվում են աչքերով,
երբ հաբրգած, զեխ տղերքը լափում են ազգի վերջին նշխարը հույսի,
երբ հայրենասիրությունը մի հին ծամոն է բերաններում անատամ,
երբ քո սրտանց մեկնած հացը ձեռքիցդ վերցնում են գողանալու պես,
երբ ջրաղաց կորցրած խանում-խաթուն գետը թոշնում-թռվիակում է,
երբ արքաներն անկուշտ, անբարիշտ բարձում են երկիրդ կաղ որձակին,
երբ խմբապետ Շավարշի ջեբից դեռ դուրս չեն եկել կուսխմբերը բազում,
երբ միակ հաղթանակը քո մնում է Հաղթանակի կամրջից նետվելը,
երբ մեռնելը չի իմանում մարդ, հետեւապես՝ չի իմանում և ապրելը,
երբ անասելի դժվար է լռեցնելն այն մարդուն, ով ոչ մի ասելիք չունի,
երբ գայլերի ձմռաշունչ ոռնոցը քո շեմից չի հեռանում եւ հունիսին,
երբ վազում ես դեպի մանկությունդ՝ ծերունական քայլքով տարտամ,
երբ ընդառաջ չի գալիս ճանապարհը, որ ինքդ ես ոտքով բացել,
երբ մարդիկ այնքան նողկալի են, փոքրոգի, որ այլեւս քեզ չես վստահում,

երբ խաբում են եւ ժպիտով, ժպիտ տեսնելիս՝ հավլունի թուրդ ես հանում,
երբ բառերը ՝ սրա-նրա տակ պառկելուց, շան թազնանոցի են փոխվում,
երբ գիշանգղը՝ որպես ճերմակ աղավնի, իջնում է քո վշտակոր ուսին,
երբ աղջիկն, ավաղ, հպարտանալու բան չունի իր հետույքից բացի,
երբ թևերը հավքի գոց փակագծեր են՝ երկնքի բորբ կապույտներին,
երբ խոսքն ասվող անվրեպ չէ, թիրախային, ինչպես գնդակը Մոնթեյի,
երբ ժողովրդավարությունը վերջին հատիկդ վարում է քարելու պես,
երբ հրեշտակները քեզ խեղդում են, հանց ճուռակը՝ մանկան ձեռքում,
երբ Բունինի սիրո երգերն ունկնդրում են իր կիները՝ երկու և ավելի,
երբ բազեի երգը չի վիճարկում մամռակալած լռությունն անտառի:
Երբ գրիչը ձեռքս եմ առնում, այն դառնում է ոսկյա հեռադիտակ,
և Փաշինյանը Անդրանիկ փաշայի ձիու ճամփան դարձնում է թավշյա,
և տեսնում եմ հարյուր-հազար տարվա հեռուն՝ ինչպես իմ ափի մեջ,
անսահման հեռուն, որ գուցե չկա, բայց և այնպես՝ ես այնտեղ կամ:

ՄԵՆԱԿ ՄՆԱԼՈՒ ՕՐ

Ինձ ծաղրում է թիթեղներին զարկվող
անձրևը՝ իր խուլ վշշոցներով նմանակելով
ափերից ելած գետերի
հորդ գալարումները՝ մեր հին հանդերում:
Ակամա պատուհանից դուրս եմ նայում:
Կառապանը փողոցում մտրակում է ձիերին,
որոնք մեքենաների՝ կանգնելու աստիճան
դանդաղեցված ընթացքի մեջ,
այլևս սովոր տեղի-անտեղի հնչող ազդ ու նշանին,
քաշում են կառքը: Կառքում համբուրվում է մի զույգ:
Մի պահ աչքերս փակում եմ. վայրի ձիերը հիմա
դունչ-դնչի պատսպարվել մեր քարայրներում,
պլզած աչքերով նայում են անլեռ,
ամպերով համահարթված աշխարհին:

– Ձիերի զգվանքներում երբեք սուտ չի լինում:
Անգամ ծմակի կողք-կողքի կանգնած ծառերը
անտառի թանձր մշուշի մեջ իրար չեն տեսնում:
Ես մոտենում եմ գրասեղանիս, վերցնում գրիչը,
ինչպես շատ տարիներ առաջ
Խաչի պապս կվերցներ թին ու կգնար գոմը մաքրելու…
Երբ աչքերս լեռներ չեն տեսնում, սկսում են կծպծալ:

Թուխպ է: Ինքն իր հետ կամ զույգ-զույգ մենակ մնալու օր է:

* * *

Մտածում էի, որ այսօր ուրբաթ է,
բայց պարզվում է, որ չէ՝ շաբաթ է,
և այն տպավորությունն եմ ստանում,
թե օրերն իրենց արանքում
ինձանից
դեռևս չապրված օր են փախցնում:

* * *

Չգիտեմ մանկական
ինչ խաղ էր,
քո ճակատին գրել էին՝ ծաղիկ,
իմ ճակատին՝ մեղու,
բայց դու էիր
թռչում դեպի ինձ,
որովհետև ես ամաչկոտ էի:

* * *

– Սեր չկա,- ասում են նրանք, որ երբեվիցե չեն սիրել:
– Սեր կա,- ասում են նրանք, ովքեր սիրուց գժվում են:
Իսկ նրանք, ովքեր ոչ սիրում են, ոչ էլ չեն սիրում,
ոչին չեն ասում,

լուռ ամուսնանում են, շատ երեխաներ են ունենում
և երբեք էլ մտքներով չի անցնում՝ սեր կա՞, թե չկա:

* * *

Չեմ ուզում ոչ մեկն
ինձ հասկանա
թեև
ի վերջո
այդպես էլ կա:

* * *

Երբ մարդ հոգնում է իրենից
հնարավոր
լիներ, ինչպես համացանցում,
ինքն իրեն՝
սլաքի մի չնչին լայքումով,
ընկերությունից հաներ:

* * *

Իմ ներսից էր, բռնկվել-վառվում էի,
բայց ես՝ բանից դեռ անտեղյակ:
Այդ մասին ինձ ասացին երկնքից,
երբ ծուխս արդեն այնտեղ էր հասել:
Ամպերը ջուր բերեցին, որ հանգցնեն,
հրաժարվեցի, ոչ մեկին մոտ չթողեցի.
խռով էի բոլորից, ինձանից խռով էի:
Ու այդպես, ինքս իմ հրի ճարակում՝
մինչև հիմա… Սա ուրիշ վայելք է,
երբ քո մեջ այրվում ես մարմանդ՝
նայելով քո ծխի թանձր քուլաներին: